

ՊՈՂՈՍ. ՎԱՐՍԵԳԱՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱՂԳԵՆ ԱՌԱՋԻՆԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՕՐՈՔ (1956—1980)*

Մայրավանքի բակի պարսպապատում և բարեկարգում

Վանքատարածության պարսպապատումը, ինչպես նշվել է վերը, սկսվեց 1954 թվականին: Այն ժամանակ իրականացվեց միայն վանքի հյուսիսային՝ բակի և քաղաքային այգու միջև ընկած հատվածի պարսպապատումը:

Նոր վեհարանի շենքը Մայր Աթոռին վերադարձվելուց հետո կազմվեց պարսպապատման նոր նախագիծ[32], որով Նոր վեհարանի տարածքի հյուսիսային, արևմտյան և մասամբ հարավային սահմանները պետք է շրջապատվեին շուրջ 470 մ. ընդհանուր երկարությամբ, 4,9 մ. բարձրությամբ և 0,5 մ. հաստությամբ պարսպապատով: Նույն չափերով հետագա տարիներին կառուցվեցին նաև վանքատարածության մյուս կողմերի (հարավային, հյուսիս-արևելյան) պարսպապատները: Այդ ընթացքում քանդվեցին հին, հոդաշեն պարիսպների մնացորդները: Պահպանվեց միայն հարավային (Ներսիսյան լճին նայող) պարսպապատի մի փոքր հատված՝ հին դարպասով հանդերձ[33]: Այդ աշխատանքներին զուգընթաց, կատարվում էր արևելյան, հյուսիսային և հյուսիս-արևմտյան (դեպի Նոր վեհարանի բակը) դարպասների կառուցումը:

Ժամացույցի աշտարակի կառուցում

Հյուսիսային դարպասի կառուցման անհրաժեշտությունը ծագեց ժամացույցի համար աշտարակ կառուցելու և վանքի բակից դեպի Աթաբիկյան փողոցը եզք ունենալու նպատակով: Մայր Աթոռի ճարտարապետների հանձնաժողովն իր 1957 թ. դեկտեմբերի 20-ի նիստում, քննության առնելով տեղի հարցը, եպատակահարմար համարեց աշտարակը կառուցել հյուսիսային պարսպապատի արևմտյան վերջավորության վրա: 1958 թ. ժամացույցի աշտարակի կառուցման նախագիծը (հեղինակ՝ ճարտարապետ Ա. Գալիկան) հավանություն ստացավ:

Կառուցումն ավարտվելուց հետո աշտարակի հարավային պատին փորագրվեց հետևյալ արձանագրությունը.

«Ի Հայրապետութեան
Տ. Տ. Վազգենի Ա Կաթողիկոսի
կառուցաւ աշտարակս 1959 թ.»:

Աշտարակից փոքր-ինչ արևմուտք, պարսպապատի նեղսի կողմում կառուցվեց մուտքակարանը:

Մայրավանքի արևելյան մեծ դարպասի կառուցում

Արևելյան (գլխավոր) դարպասի նախագծման և կառուցման ուղղությամբ գործնա-

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1983 թվականի № № ԺԱ—ԺԲ-ից և 1984 թվականի № Ա-ից:

[32] Հեղինակներ՝ ճարտ. ճարտ. Մ. Մազմանյան, Ֆ. Չոմայան:

[33] Հարավային պարսպապատը կառուցվեց ճարտ. Ա. Գալիկյանի նախագծով (տես Մայր Աթոռի շին. գրասենյակի արխիվ):

կան քայլերն սկսվեցին 1961 թ. մարտից: Մայր Աթոռի ճարտարապետների հանձնաժողովը, նախագծի մշակումը ճարտ. Ա. Գալիկյանին հանձնարարելով՝ առաջադրանք էր տվել օգտագործելու Հոռոմոսի վանքի հաղթակամարի՝ «Ղոշերի» ճարտարապետական ձևերը: Այդ ոգով էլ հեղինակը մշակեց նախագծերի երկու տարբերակ: Հավանության արժանացած նախագծում պարզեցման նպատակով որոշ փոփոխություններ կատարվեցին կառուցման ընթացքում:

Կառուցումն ավարտվելուց հետո դռան վրա փորագրվեց հետևյալ արձանագրությունը.

«Ի Հայրապետութեան Տ. Տ. Վազգենի Առաջնոյ Կաթողիկոսի Ամենայն Հայոց յամի Տեառն 1962 կառուցաւ արևելեան դարպասն Մայր Աթոռոյ սրբոյ Էջմիածնի, Ի վայելումն ազգիս հայոց»:

Դրանով ավարտվեցին պարսպապատման աշխատանքները: 6,8 հկտ. մեծությամբ վանքատարածությունը ամփոփվեց 1000 մ. երկարությամբ պարսպապատերի մեջ: Եթե դրան գումարենք կառուցված այն պատերը, որոնցով միմյանցից անջատվեցին մայրավանքի առանձին բակերը, պարսպապատերի ընդհանուր երկարությունը կկազմի 1080 մ.:

Պարսպապատմանն ու դարպասների կառուցմանը զուգընթաց, դեռևս 1957 թվականից ծավալվել էին աշխատանքներ Մայր տաճարի և Նոր վեհարանի բակերի ընդհանուր բարեկարգման ուղղությամբ (Մայր տաճարի բակը, ըստ ճարտարապետներ Միք. Մազմանյանի և Կորյուն Ղաֆադարյանի կազմած նախագծի, վերամշակվեց և ճշտվեց ճարտ. Ա. Գալիկյանի կողմից): Կանաչապատվեց հիշյալ տարածքը, որտեղ տնկվեցին նոր ծառեր ու թփեր: Երկու անգամ (սկզբում տուֆաքարով, ապա՝ բազալտով) սալապատվեց Մայր տաճարի շրջապատը, կարգի բերվեցին ու ասֆալտապատվեցին հիմնական անցուղիները, կարգավորվեցին ոռոգման ցանցի և ջրամատակարարման համակարգերը, ինչպես նաև էլեկտրական լուսավորումը:

Պատճաշ ուշադրություն նվիրվեց նաև երկու բակերի բարեկարգմանը: Մայր տաճարի կառուցման տեղի վաղնջականությունը վկայող ուրարտական կոթողը (այն, որ գտնվեց Ավագ խորանում կատարված պեղումների ժամանակ) որոշվեց պատվանդանի վրա կանգնեցնել Մայր տաճարից ոչ հեռու, հյուսիսային կողմում: Կոթողի պատվանդանի վրա արձանագրվեց. «Ուրարտական կոթող 8—7 դդ.. մ. թ. ա. պեղված Մայր տաճարի Ավագ սեղանի վերակառուցման ժամանակ»:

Նահատակաց հուշարձանի կառուցումը

Նույն տեղում, տաճարի հյուսիս-հարավ առանցքով կանգնեցվեց «Նահատակաց հուշարձանը» (հեղ. ճարտ. Ռաֆայել Իսրայելյան, արծվի քանդակի հեղինակ՝ արձանագործ Արա Հարությունյան)[34]: Այս հոյակապ կոթողը, որը կոչված էր մարմնավորել հայ ժողովրդի պատմության մռայլ էջերից մեկը՝ 1915 թ. Եղեռնը, իր ասիմետրիկ խմբական խաչքարերի հորինվածքով, ազգային արվեստի ավանդույթների վրա հիմնված արտահայտչամիջոցներով իրոք մարմնավորեց պահանջվող գաղափարը ու դարձավ Մայրավանքի բակի անկրկնելի զարդերից մեկը: Հուշարձանի հարավային պատին փորագրվեց «Խաչքար աղոթքի և ուխտի, ի հիշատակ 1915 թվի ապրիլյան Եղեռնի հայ նահատակների. կառուցված 1965» արձանագրությունը, իսկ հյուսիսային ճակատին՝ «Վան, Մուսա լեռ, Զեյթուն, Եդեսիա, Հաճըն, Մարաշ, Շապին Գարահիսար, Սարդարապատ, Սասուն» մակագրությունը՝ նվիրված վերոհիշյալ քաղաքների հերոսամարտերի հիշատակին:

Մայր տաճարի բակի բարեկարգման մյուս բաղկացուցիչները հանդիսացան նորակառույց երկու աղբյուրները: Դրանցից փոքրը և ձևերով պարզը (հեղ. Ա. Գալիկյան) տեղադրվեց բակի արևելյան ծայրում, Երեմյան խցերի մոտ: Մյուսը, որ «Կաթնաղբյուր» է կոչվում (հեղ. Ռ. Իսրայելյան) նառուցվեց նույնպես արևելյան կողմում, բայց դեպի Մայր տաճարը բերող գլխավոր ուղու ձախա-

[34] Մայր Աթոռի ճարտարապետների հանձնաժողովն իր 1964 թ. հոկտեմբերի 10-ի նիստում, նախապես քննարկման ենթարկելով հուշարձանի նախագծման հարցը, առաջադրեց հուշարձանի հորինվածքում օգտագործել խաչքարի գաղափարը, որը խորհրդանշելու էր Եղեռնի նահատակների սիմվոլիկ շիրիմը: Թեև որոշված էր նախագծի մշակումը հանձնարարել հանձնաժողովի անդամներին, սակայն հայրենասիրական ձգտումներից մղված՝ գործին մասնակցեց նաև ճարտարապետների մի այլ խումբ՝ Հրաչդան Պալյանը Կահիրեից (4 նախագիծ), Մարտիրոս Կաուկչյանը Երևանից (1 նախագիծ): Հանձնաժողովի անդամներից մրցույթին մասնակցեցին Ա. Գալիկյանը (1 նախագիծ), Բ. Արզումանյանը (4 նախագիծ) և Ռ. Իսրայելյանը (6 նախագիծ): Բաղդասար Արզումանյանի, Արծրուն Գալիկյանի և Ռաֆայել Իսրայելյանի նախագծերը հրապարակվեցին «Էջմիածին» ամսագրում (տես «Էջմիածին», 1965, փետրվար-մարտ համարների 156, 186 և 187 էջերը): Քննության առնելով ներկայացված նախագծերը՝ հանձնաժողովը հավանության արժանացրեց Ռ. Իսրայելյանի նախագծերի մի տարբերակը, որը և իրականացվեց (տես ՃՀ-ի արձ-ներ, թ.թ. 88, 90, 93 և 94);

կողմն մատում, ճանապարհից փոքր-ինչ Է.ա (տպարանի շենքից արևմուտք):

«Կաթնաղբյուր» հուշարձանի կառուցում

Իր հարտարապետական ձևերով եզակի, հորինվածքում հին խաչքար ամփոփած այս «Կաթնաղբյուր» հուշարձանի պատին փորագրվեց հետևյալ արձանագրությունը.

«Ի հայրապետության Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսի, 1967 թվականին կառուցվեց սույն աղբյուր հուշարձանը՝ նվիրատվությամբ ամերիկահայ Ստեփան Տեր-Գրիգորյանի, ի հիշատակ Քղի քաղաքի նահապետ Գրիգոր ավագ քահանա Պարոյանի, մեծ հոր՝ Ավագի և ծնողների՝ Մանուկ և Ագիպ Տեր-Գրիգորյանների, 1915 թվականի Եղեռնին նահատակված քանուք հարազատների և նրանց հայրենական այգու՝ «Կաթնաղբյուր»-ի»:

Վեհափառ Հայրապետ Վազգեն Ա կաթողիկոսի ցանկությամբ և թելադրանքով Սովետական Հայաստանի, ինչպես նաև Նախիջևանի և Լեռնային Ղարաբաղի ինքնավար Հանրապետությունների տարբեր վայրերում անխնամ մնացած խաչքարերը տեղափոխվեցին ու տեղադրվեցին վանքի բակի հյուսիսային պարսպապատի առջև, նախկին Սինոդի շենքի բակում, դեպի Նոր վեհարանը տանող ճանապարհի աջակողմյան ցանկապատի ուղղությամբ, Հին վեհարանի սրահում ու բակում: Սրանք առավել շուք ու խորհուրդ հաղորդեցին ս. Էջմիածնի մայրավանքի հինավուրց տարածքին՝ միաժամանակ նրան տալով խաչքարերի մի յուրօրինակ բացօթյա բանգարանի տեսք:

Վերոհիշյալ վերանորոգչական և բարեկարգման բոլոր աշխատանքների ավարտին ս. Էջմիածնի Մայր տաճարի Ավագ սեղանի հետնապատին փորագրվեց հետևյալ արձանագրությունը.

«Յուսով անմահին Աստուծոյ ի Հայրապետութեան Տ. Տ. Վազգենի
Առաջնոյ Սրբազնագոյն Կաթողիկոսի Հայոց կտակաւ բարեպաշտ Գալուստ Կիպզենկեանի, ի յիշատակ ծնողաց իւրոց Սարգսի և Տիրուհւոյ յամի Տեառն 1957—1959 վերանորոգեցաւ Մայր տաճարն ս. Էջմիածնի, կանգնեցաւ մարմարակերտ Աւագ սեղանն, վերաշինեցաւ մարմարեայ Իջման ս. սեղանն, վերականգնեցաւ հարաւային գմբէթն, պատեցան մարմարեղէն սալօք յատակքն Մայր տաճարի, աւանդատանց և քանգարանի, նորոգեցան սիւնք, կամարք և տանիքն կաթուղիկէին, տաճարն պարդարեցաւ ջահիւք և գորգովք, կատարեցան այլ վերանորոգութիւնք և բարեկարգութիւնք և շրջապատն տաճարի սալարկեցաւ և պարսպապատեցաւ ի վայելուն ապդիս Հայոց: Որք երկրպագէք, յիշեցէք ի Քրիստոս Յիսուս:

Կտակն բարերարի Գալուստի Կիպզենկեան իրագործեցաւ ի ձեռն Գալուստ Կիպզենկեան հիմնարկութեան ի Լիսաբոն»:

Մայր Աթոռի տպարանի շենքի վերակառուցում

Անդրադառնալով Մայր տաճարի բակը շրջապատող շենքերի վերանորոգությանը՝ պետք է նշել, որ առաջին քայլն այդ ուղղությամբ հանդիսացավ վերանորոգումը տպարանի հին շենքի, որն ապատվեց բնակիչներից ու վերադարձվեց Մայր Աթոռին՝ իրագործելու համար Մայր Աթոռը ժամանակակից տպարանով օժտելու մասին Վազգեն Ա Կաթողիկոսի ծրագիրը:

Մայր Աթոռի տպարանի վերանորոգումը կատարվեց ըստ ճարտ. Ա. Գալիկյանի շինարարական և ինժ. Ա. Մատինյանի տեխնոլոգիական նախագծի՝ կազմված 1959 թ.:

Այս շենքը, որ կառուցված էր անցած դարի 80-ական թվականներին (1889)[21] որպես տպարանի շենք, միահարկ էր: Երկրորդ հարկը կառուցվել էր մեր ժամանակներում և օգտագործվում էր որպես հանրակացարան: Համաձայն նախագծի, երկրորդ հարկը ամբողջապես պիտի քանդվեր և նորից կառուցվեր (առաջին հարկի ճարտարապետական ձևերով ու նույն գույնի քարով), որպեսզի ներդաշնակություն ստեղծվեր երկու հարկերի միջև: Հիմնովին պիտի վերակառուցվեին փայտյա սանդուղքները, միջհարկային փայտյա ծածկը, հողածածկ հարթ կտուրը, պիտի փոխվեին բոլոր դռներն ու լուսամուտները և այլն: Շենքը պետք է հարմարեցվեր նորից տպարանի համար օգտագործելու նպատակին: Շենքի առաջին և երկրորդ հարկերում պետք է տեղավորվեին հիմնական արտադրամասերը (գրաշարական, տպագրական, կազմարարական և այլ), գրասենյակը, օժանդակ սենյակները, բուֆետը:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո տպարանը կահավորվեց արտասահմանից ստացված արդիական մեքենաներով ու սարքերով և, որոշ տարիների ընդմիջումից հետո, սկսեց գործել որպես Մայր

[21] Տես «Էջմիածին», 1958, հուլիս, էջ 46—52, սեպտեմբեր, էջ 30—38:

Աթոռի տպարան: 1961 թվականին Վեհափառ Հայրապետի նախագահությամբ տեղի ունեցավ Մայր Աթոռի նոր տպարանի հանդիսավոր բացումը՝ որպես «Լույսի նոր աղբյուր» հայ ժողովրդի քրիստոնեական դաստիարակության ճանապարհին:

Այդ առթիվ տպարանի պատին փորագրվեց հետևյալ արձանագրությունը.

«Ի Հայրապետութեան Տ. Տ. Վազգենի առաջնոյ Կաթողիկոսի Ամենայն Հայոց յամի 1959—1962 նորոգեցաւ առաջին յարկն տպարանի Սրբոյ Էջմիածնի, ի նորոյ կառուցաւ երկրորդ յարկն ու տեղադրուեցան տպագրական մեքենայքն սարքօքն իւրեանց նուիրատուութեամբ բարեպաշտ ժողովրդեան Հայոց Ամերիկայի Միացեալ Նահանգաց ի վայելումն ազգիս Հայոց»:

Մայր Աթոռի նորաբաց տպարանում սկսեցին հրատարակվել «Էջմիածին» ամսագիրը, Մայր Աթոռի տարեկան օրացույցը, այնտեղ տպագրվեցին Վեհափառ Հայրապետի ուղևորություններին նվիրված հուշամատյանները, նրա կոնդակները, քարոզները ու ճառերը, Նոր Կտակարանի արևելահայերեն թարգմանությամբ երեք հրատարակությունները, ինչպես նաև կրոնական և հայագիտական բովանդակությամբ այլ գրքեր:

Տրդատա դուռ

Տրդատա դուռը եղավ վերաշինության մեջ ընդգրկված հաջորդ հուշարձանը: Կիսավեր վիճակում այն հայտնաբերվեց, երբ քանդվում էր Հին վեհարանից դեպի հյուսիս ընկած հոդաշեն խարխուլ շենքը, որպեսզի եկեղեցական թափորների համար ուղիղ ճանապարհ ստեղծվեր Մայր տաճարի արևմտյան դռնից դեպի Նոր վեհարանը:

Մայր Աթոռի ճարտարապետների հանձնաժողովը 1962 թ. մարտի 9-ին, տեղում ծանոթանալով Տրդատա դռան պահպանված մասերին, նպատակահարմար համարեց այն վերականգնել ու պահպանել՝ նկատի ունենալով դռան ավանդական նշանակությունը ու նրա անհրաժեշտությունը եկեղեցական տոների օրերին:

Հաղթակամարի հորինվածք ունեցող այս էպակի կառուցվածքը՝ հիմքում 4,7×6,2 մ. չափերով, 3,60 մ. կամարային բացվածքով և 11,0 մ. բարձրությամբ, դատելով այն բանից, որ հիմնախարսխից հետո 5 շարքերում բարձրությունը կազմում է 0,55—0,63 մ., իսկ վերին շարքերինը՝ 0,39—0,42 մ., ակնբախորեն շինարարական երկու տարբեր շրջանների արգասիք է: Եթե նրա ստորին մասի կառուցումը կարելի է վերագրել վաղ միջնադարին, ապա վերնամասը (կամարով և քիվով հանդերձ) վերաշինվել է ուշ միջնադարում:

Տրդատա դռան նախնական կառուցվածքի վերակազմումը կատարվեց ճարտ. Ա. Գալիկյանի նախագծով: Ըստ այդ նախագծի, նախ և առաջ պետք է հեռացվեր այստեղ կուտակված հողը և քանդվեր կամարային բացվածքում շարված պատը: Ապա նախատեսվում էր հիմքը (վերականգնվող մասում) շարել ճեղքված բազալտից, հիմնախարիսխի ստորին շարքը՝ սրբատաշ բազալտից, մնացածը՝ սրբատաշ տուֆից, արևելյան կիսավեր ճակատը՝ քիվով հանդերձ, վերականգնել սրբատաշ տուֆով (հիմք ընդունելով լավ պահպանված արևմտյան ճակատի ձևերը): Հուսալի ամրությունն ապահովելու համար երկու հենարանների արևելահայաց լրացվող մասերում պետք է տեղադրվեին երկաթբետոնյա ուղղաձիգ ներդիրներ ու դրանք կապվեին գոյություն ունեցող մասերի հետ, իսկ ամբողջ վերնամասը (քիվերի ետևում) ծածկվեր երկաթբետոնյա սալով:

Հավանության արժանացած այդ նախագծով էլ իրականացվեց Տրդատա դռան վերանորոգումը իր նախնական տեսքով: Նկատի ունենալով, որ Նոր վեհարանի բակը ճաղացանցով ու դռնով պետք է անջատվեր վանքի բակից, Տրդատա դռնից դեպի արևմուտք մի սալահատակ հարթակ ստեղծվեց՝ հարավային կողմում պահակատնով: Այն կապակցությամբ, որ Նոր վեհարանի բակը Մայր տաճարի բակից մոտ 1,5 մ. բարձր էր, հարկ եղավ Տրդատա դռնից դեպի Նոր վեհարանը տանող ճանապարհին տալ համապատասխան թեքություն ու այն սալարկել տուֆաքարով: Ճանապարհի երկու կողմերից կատարված թեք հողալիցքը կանաչապատվեց, ու տնկվեցին նռան թփեր: Ճանապարհի կողմից Սինոդի բակը մետաղյա ճաղով անջատվեց, և քարե աստիճաններ կառուցվեցին՝ Սինոդի բակից Տրդատա դռան հարթակը իջնելու համար:

Երբ ավարտվեցին ծրագրված բոլոր աշխատանքները, և ավերակների միջից իր նախնական հոյակապությամբ վերստին հառնեց Տրդատա դռան կառուցվածքը, նրա արևելյան պատի աջակողմյան վերնամասում արձանագրվեց. «Ի Հայրապետութեան Տ. Տ. Վազգէն Ա Կաթողիկոսի Ամենայն Հայոց նորոգեցաւ ի թուին ՌՆԺԱ», իսկ կամարից վեր՝ «Դուռն Տրդատայ»:

Նոր վեհարանի վերակառուցումն ու բարեկարգումը

Նոր վեհարանի վերաշինությունը հանդիսացավ Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն

Ա-ի շինարարական բեղմնավոր գործունեության կարևորագույն էջերից մեկը:

Այս մեծածավալ երկիրկանի քարակերտ շենքը կառուցվել էր (հիմնարկեքը կատարվել է 1910 թ. հունիսի 6-ին) Աշնքանոց Մանրաշուի եղիրատվությամբ ու ճարտարապետ Գ. Զոհրաբյանի (Զոհրաբով) նախագծով:

Առաջին աշխարհամարտը սկսվելուց հետո թերավարտ շենքը սովետական իշխանության տարիներին ավարտվել և օգտագործվում էր այլ նպատակների համար: Սովետական Միության բարեհնամ կառավարության որոշմամբ, ի թիվս վանքապատկան այլ շենքերի, Վազգեն Ա Կաթողիկոսի օրով Նոր վեհարանի շենքը ևս վերադարձվեց ս. Էջմիածնի Մայր Աթոռին: 1957 թվականից վերանորոգչական աշխատանքներ ձեռնարկվեցին շենքի վերաշինության ուղղությամբ:

Շենքի մանրամասն չափագրության և ուսումնասիրության հիման վրա, ճարտարապետ Ա. Գալիկյանի կազմած նախագծով[36], այն պետք է ենթարկվեր արմատական վերակառուցման՝ հիմնականում պահպանելով պատերն ու ծածկերը: Վերահատակագծման միջոցով առավելագույն չափով այն պետք է համապատասխանեցվեր Վեհարանի ֆունկցիոնալ պահանջներին: Նախատեսվում էր նկուղային հարկն օգտագործել տնտեսական կարիքների համար, առաջին և երկրորդ հարկերի աջակողման (հյուսիսային) թևը հատկացնել հայրապետական բնակարանին և հյուրասենյակներին, իսկ ձախակողման (հարավային) թևում տեղադրել Վեհարանի պաշտոնական գրասենյակը[37]: Երկրորդ հարկի մեծ սրահը պետք է ծառայեր կրոնական ժողովների, հանդիսությունների ու կինոցուցադրումների նպատակին:

Նոր վեհարանի շենքի արմատական վերակառուցումը, լավ նախագծի, պահանջեց իրականացնել մեծածավալ շինարարական աշխատանքներ: Երկաթբետոնով վերափոխվեցին միջհարկային ծածկերի այն մասերը, որ փայտից էին: Քանդվեցին-վերացվեցին բոլոր միջնորմները, ապամոնտաժված հատակները, փոխվեցին նոր հատակներ և մարմարապատվեցին: Բոլոր պատերից հեռացվեց հին ծեփը, և պատերը վերստին ծեփվեցին գաչով: Ժամանակավոր դռների ու պատուհանների փոխարեն տեղադրվեցին կաղնու փայտից պատրաստված նորերը: Հիմնովին վերանորոգվեց կտուրի ծածկը, փոխվեցին որոշ ծպեղնատներ, ինչպես նաև թիթեղապատվեց կտուրի պղպջի մասը: Դրա հետ մեկտեղ, ողջ շենքը կահավորվեց սանիտարական նոր սարքավորումներով, ստեղծվեցին ջրատարակարարման և կոյուղու գծեր, ամբողջովին վերափոխվեց կենտրոնական ջեռուցման համակարգը, տեղադրվեց ջեռուցման նոր կաթսա[38], շենքն ապահովվեց էլեկտրական լուսավորության, ռադիոյի և հեռախոսային գծերով, որոնք բոլորն էլ անցկացվեցին փակ խողովակների միջով:

Զուտ շինարարական աշխատանքներին զուգընթաց, մշակվեցին ու քննարկվեցին ներքին ձևավորման սկզբունքներն ու կազմված առանձին նախագծերը: Հատուկ ուշադրություն նվիրվեց շենքի այնպիսի կարևոր մասերին, ինչպիսիք են նախասրահը, գլխավոր սանդղաստունը, ժողովների դահլիճը, գահասրահը, Վեհափառ Հայրապետի ընդունարանը (ապասասրահով հանդերձ), սեղանատունը, երկրորդ հարկի երկու անցումային սենյակները (որոնք վերնից լուսավորվեցին), խոհանոցը և այլն:

Ներքին ձևավորման նախագծերը գերազանցապես մշակվեցին ճարտարապետ Ա. Գալիկյանի կողմից: Նախագծերի մշակման գործում մասնակցություն ունեցան նաև ճարտարապետներ Ռ. Խաչատրյանը և Բ. Արզումանյանը: Նրանց ստեղծագործական համագործակցության արդյունքը եղավ Նոր վեհարանի սմենագեղեցիկ և հանդիսավոր մասը՝ գահասրահը: Ոչ մեծ չափերի այդ դահլիճը (որ կից է ժողովասրահին հարավային կողմից ու նրա հետ հաղորդակցվում է մեծ բացվածքով) հիմնականում ձևավորվեց ճարտ. Ա. Գալիկյանի մտահղացմամբ:

Գահասրահի պատերն ամբողջապես երեսպատվեցին Վայոց ձորի բաց դեղնավուն երանգի ֆիրլիտային տուֆով: Ապա հարավային և արևմտյան պատերը հարդարվեցին կաթողիկոսանիստ տաճարների՝ ս. Հռիփսիմեի, ս. Էջմիածնի Մայր տաճարի և Զվարթնոցի (հարավային պատին), Աղթամարի, Անիի Մայր տաճարի և Գանձասարի վանքի (արևմտյան պատին) պատկերների մեծադիր հարթաքանդակներով: Հյուսիսային պատի վերնամասում փորագրվեց «Ես կենդանի եմ, դուք կենդանի լինելու էք» ավետարանական խոսքը, իսկ բացվածքի երկու կողմերի վրա՝

[36] Նախագիծը քննարկվել և հաստատվել է ՃՀ-ի 1957 թ. նոյեմբերի 12-ի նիստում (տես արձանները, թ. 2):

[37] Վերաշինական աշխատանքների ընթացքում նախագծում կատարվեցին մասնակի փոփոխություններ: Նկատի ունենալով նպատակավոր դիրքորոշումը՝ հայրապետական բնակարանն ու կից հյուրասենյակները տեղադրվեցին շենքի հարավային թևի առաջին հարկում:

[38] Հետագայում Նոր վեհարանը միացվեց կենտրոնական կաթսարատանը:

հայ կաթողիկոսների անունները՝ սկսած ս. Գրիգոր Լուսավորչից: Մակագրություններ փորագրվեցին նաև մնացած պատերի վերնամասերում: Հարավային պատին՝ «Էջմիածինն ի Հօրէ և լոյս փառաց ընդ նմա», արևմտյանին՝ Մովսես Խորենացու հայտնի «Բանում գործք արութեան գտանին գործեալ եւ ի մերում աշխարհիս եւ արժանի գրոց յիշատակի», իսկ արևելյանին՝ Կորյունի «Քանզի յԱրարատեան գաւառին բղխեցին հայոց շնորհք պատուիրանացն Աստուծոյ» մեսրոպատառ մակագրությունները:

Գահասրահի գեղեցիկ պարդերից մեկը եղավ նաև հարավային պատի կենտրոնում սեղադրված մարմարակերտ գահը (հեղինակ՝ ճարտարապետ Բ. Արզումանյան)[39]:

Գահադահլիճի ձևավորման աշխատանքներին ճարտարապետ Ռ. Իսրայելյանը մասնակցեց արևելյան պատի վերնամասում կրոնական գաղափարներ խորհրդանշող չորս վարդյակների ու մարմարակերտ գահի թիկնամասի երկու կողմերում ճյուղերի (մեկը խաչով, մյուսը կենաց բույսով պսակված) քանդակների էսքիզների մշակմամբ:

Այստեղ առանձին կարևորությամբ և շնորհակալությամբ պետք է նշել, որ, ինչպես Նոր վեհարանի, այնպես էլ Մայր տաճարի և ընդհանրապես Մայրավանքի շինարարական, բարեկարգման և վերանորոգման բոլոր աշխատանքներին իրենց սրտագին մասնակցությունը բերեցին հայրենի շնորհալի ինժեներներ, քանդակագործներ, հմուտ արհեստավորներ և վարպետներ:

Նոր վեհարանի բարեկարգման ակնառու աշխատանքներից մեկն էլ գլխավոր մուտքի և երկու կողմնային լուսամուտների վանդակապատումը եղավ: Ճարտարապետ Բ. Արզումանյանի ճաշակավոր նախագծով այդ աշխատանքը ընտիր մետաղից պատրաստեց բեյրութաբնակ Գեղամ Տանձիկյանն իր գործարանում, ապա իր և իր տիկնոջ՝ Անգինեի անունից նվիրեց Նոր վեհարանին և այն իր իսկ ձեռքով տեղադրեց:

Հավարտ բոլոր շինարարական աշխատանքների, բարերարների նկատմամբ մշտապես ուշադիր Վեհափառ Հայրապետի հրամանով մարմարյա երկու տախտակներ ամրացվեցին Նոր վեհարանում (առաջին հարկում, գլխավոր սանդղքատան կողքի պատերին): Դրանց վերնամասերում փորագրված է. «Ի Հայրապետութեան Վազգէն Ա Կաթողիկոսի բարերարք Մայր Աթոռ սբ. Էջմիածնի» արձանագրությունը, որի տակ հիշատակված են ազգանուններն ու անունները քառասուն բարերարների, որոնք իրենց նյութական միջոցներով սատար հանդիսացան Նորին Սրբության շինարարական ծրագրերի իրականացմանը:

Նոր վեհարանի վերաշինությունը, որն ավարտվեց 1962 թ., հանդիսացավ Վազգեն Ա Կաթողիկոսի շինարարական գործունեության փառապսակը: Այն կատարվեց բացառիկ խնամքով, բարձր որակով: Դա արդյունք էր ոչ միայն գործադրված բարձրորակ շինանյութերի, աշխատող վարպետների բարեխղճության, այլ նաև կատարվող աշխատանքների նկատմամբ Վեհափառ Հայրապետի պահանջկոտության և ամենօրյա հսկողության: Եթե դրան ավելացնենք շենքի առավել կարևոր մասերի (նախասրահ, ժողովասրահ, նրան կից սրահներ, կաթողիկոսական ընդունարան և աշխատասենյակ, սեղանատուն, նրան կից ապասասրահներ, վերևից լուսավորվող երկրորդ հարկի երկու անցումային սենյակները և այլն) բարձրաճաշակ կահավորումը ընտիր կահույքով (մեծ մասամբ պատվիրված Հունգարիայում), բյուրեղապակյա ջահերի (պատվիրված Չեխոսլովակիայում) տեղադրումը ժողովասրահում, դահլիճներում, սանդղքատանը և այլուր, ապա Նոր վեհարանի վերաշինության այստեղը առավել լրիվ կդառնա:

Նոր վեհարանի բակի բարեկարգում

Վերաշինական աշխատանքներին զուգընթաց, պատշաճ հոգ տարվեց նաև վեհարանի բակի պարսպապատմանն ու բարեկարգմանը: Այդ աշխատանքներն իրականացվեցին ճարտարապետ Էդ. Ութուջյանի (Փարիզ) նախագծով: Ավարտվեց պարսպապատումը և բակի հյուսիս-արևմտյան անկյունում թողնվեց քաղաքի հետ կապող մի լրացուցիչ դարպաս: Բակն ամբողջությամբ կանաչապատվեց ու գեղեցկացավ ծաղկամարգերով: Բակի հարավային հատվածում ստեղծվեց խաղողի ոչ մեծ այգի: Այդ բոլորի շնորհիվ Նոր վեհարանի շուրջն ստեղծվեց մի մտերմիկ ու հաճելի միջավայր: Նոր վեհարանի գլխավոր մուտքի առանցքով (որը համընկնում է Մայր տաճարի արևելք-արևմուտք առանցքին) դեպի Մայր տաճարը տանող ուղիղ մի ճանապարհի հյուսիսային եզրին ու բակի այլ մասերում շարվեցին հնադարյան գեղեցիկ խաչքարեր: Սրանց շարքում դրվեց նաև մի նոր խաչքար (հեղինակ՝ քանդակագործ Արտ. Հովսեփյան) ի նշանավորումն Վեհափառ Հայրապետի գահակալության քսանամյակի:

Հանգուցյալ Վեհամայր Սիրանույշ Պալճյանի հիշատակը հավերժացնելու նպատակով, նույն կողմում կառուցվեց ոչ մեծ չափի մի

[39] Սկզբնապես այստեղ դրվեց նույն հեղինակի էսքիզով Պարսկաստանում պատրաստված փայտակերտ և ոսկեզոծով ընդելուզված գահը:

աղյուսը (հեղինակ՝ ճարտ. Հ. Բարախանյան) ու ճակատին արձանագրվեց. «Ի հիշատակ Վեհափառ Միքայելյան Գալֆայանի 1884—1974, Բերութի կրոնասեր տիկնանց կողմից»:

1977 թվականին Նոր վեհարանի բակում, նրա հարավ-արևմտյան հատվածում, հիմք դրվեց Մայր Աթոռի Գանձատան մեծածավալ շենքի՝ նվիրատվությամբ Մայր Աթոռի բարեբար. Հ. Բ. Ը. Միության ցկյանս նախագահ Ալեք Մանուկյանի: Այս շենքի կառուցումը այժմ ավարտված է:

Հին վեհարանի վերանորոգում և բարեկարգում

Հին վեհարանը կառուցվել է 1738—1741 թթ. Ղազար Զահկեցի (1737—1751) կաթողիկոսի օրոք[49]: Այն երկհարկանի է, անպաճույճ, հում և թրծված աղյուսով շինված ու այդ պատճառով տարիների ընթացքում կիսախարխուլ դարձած:

Առաջին կիսանկուղային հարկը (կառուցված Մովսես Գ Տաթևացի կաթողիկոսի օրոք) հնում ծառայել է տնտեսական նպատակների: Երա երկրորդ հարկում տեղավորված էին կաթողիկոսական բնակարանը, սպասասրահը, գահադահլիճը («Ծաղկյա» կոչված), սեղանատունը և օժանդակ սենյակները: Մայր տաճարի վերանորոգության վերջին տարիներին հեռացվեց նրա տափակ տանիքի հատ հողաշերտը և կառուցվեց թիթեղապատ երկլանջ կտուր, իսկ Տրդատա դռան վերաշինության կապակցությամբ քանդվեց նաև նրա հյուսիսային վերջավորությունը և այդ կողմից ստեղծվեց տուֆաշեն պատով:

Հին վեհարանի վերաշինությունը խնդրո առարկա դարձավ, երբ Վեհափառ Հայրապետը փոխադրվեց վեհարանի նոր շենքը: Որոշվեց Հին վեհարանը հիմնովին վերանորոգել և այն վերածել հայ կաթողիկոսների թանգարանի: Այս առթիվ որոշվեց նաև դեպի Մայր տաճարի բակը նայող նրա անշուք ճակատը տուֆաքարով երեսապատել, որպեսզի միասնական գունային և ճարտարապետական կապ հաստատվի վանական նոր սեղանատան ճակատի հետ:

Արմատական վերաշինության սկզբունքները և նախագիծը (հեղինակ՝ ճարտ. Ա. Գալիկյան) Մայր Աթոռի ճարտարապետների հանձնաժողովում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, 1968 թ. մարտին քննարկվեցին և հաստատվեցին: Ապա սկսվեցին շինարարական աշխատանքները:

Նախ և առաջ, սկսած կիսանկուղային հարկից, միջոցառումներ ձեռնարկվեցին շենքի կոնստրուկտիվ ամրացման ուղղությամբ: Քարի շարվածքով և բետոնապատմամբ ապահովվեց հիմնական հենարանների հուսալի կրողունակությունը: Ապա անձեռնմխելի թողնելով գոյություն ունեցող պատերը, որոշ փոփոխություններ մտցվեցին շենքում այն թանգարանի վերածելու համար: Այդ կապակցությամբ փակվեց բակի կողմից հյուսիսային թեռում եղած մուտքը և վերացվեց առջևի քարե սանդուղքը: Փոխարենը վերաբացվեց հարավային կողմի հին սանդղքատունը՝ երկու մուտքով (արևելյան և արևմտյան կողմերից), որպեսզի հնարավոր լինի թանգարան մտնել ինչպես Մայր տաճարի, այնպես էլ Հին վեհարանի բակերի կողմերից: Արևելյան կողմից կառուցված նոր կամարի և թաղակապ սենյակի միջից տուֆաշեն աստիճաններ շինվեցին: Նույն թաղակապ սենյակի աջ և ձախ կողմերից մուտքեր բացվեցին դեպի ներքնահարկի պահեստային սենյակները:

Մայր տաճարի բակի կողմն ուղղված գլխավոր ճակատի բարեփոխումը կատարվեց այն տուֆ քարով երեսապատելու, տարբեր չափեր, ձև ու դասավորություն ունեցող լուսամուտների տիպը ըստ հնարավորին կարգավորելու միջոցով: Նույն ճակատում կատարային բացվածքներով ընդգծվեցին երկու մուտքերը, որոնցից ձախակողմյան մուտքի չափերով ու նմանությամբ ձևավորվեց դեպի սեղանատուն և Ղազարապատ հյուրանոցը տանող թաղակապ միջանցքի ճակատային պատը: Դրա շնորհիվ, բարձրությամբ, նյութով, գույնով ու ճարտարապետական լուծումով կապ և անցում ստեղծվեց Հին վեհարանի և վանական սեղանատան շենքերի միջև՝ Մայր տաճարի բակի հարավ-արևմուտքում:

Հին վեհարանի բակի կողմից վերաբացվեց շենքի կիսանկուղային հարկի միջին մասում անցյալում գոյություն ունեցող կամարակապ սրահը (որի հատակը բակի համեմատությամբ 50 սմ. ցածր էր) և այն 3 մետրով լայնացվեց բակի հաշվին ու ամբողջովին սալարկվեց տուֆով: Այնուհետև, Հին վեհարանի արևմտյան պատի ուղղությամբ ևս պատվանդանների վրա կանգնեցվեցին Հին Ջուղայի գերեզմանատնից և այլ տեղերից փոխադրված խաչքարեր:

Անդրադառնալով ներքին վերաշինությանն ու բարեկարգմանը՝ նշենք, որ դրանք նույնպես բազմապան եղան: Ամբողջովին վերափոխվեցին դռներն ու լուսամուտները, նորոգվեցին հատակները, վերածեփվեցին պատերն ու ներկվեցին: «Ծաղկյա» գահադահլիճի պատերը ծածկվեցին մետաքսե պատատակներով: Շենքն ապահովվեց ջրամատա-

[49] Յովհաննէս եպիսկ. Շահխաթունեանց, Ի. առաջին, Էջմիածին, 1842, էջ 92:

կարարման, կոյուղու, էլեկտրական լուսավորության և ջեռուցման ցանցերով:

Այդ բոլորից հետո Հին վեհարանը դրսից և ներսից վայելուչ տեսք ստացավ, օժտվեց օգտագործման համար անհրաժեշտ բոլոր միջոցներով: Ներսում, սանդղքատան պատին, գլխավոր մուտքի վերնամասում արձանագրվեց.

«Ի Հայրապետութեան Վազգէն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի վերակառուցաւ պատմական վեհարանս արդեամբ հարազատ որդւոյ Մայր Աթոռոյ ամերիկաբնակ Ալեք Մանուկեանի ի վայելումն ազգիս Հայոց»:

Ղազարապատ շենքի վերանորոգում

Ղազարապատ հյուրանոցը, որ Հին վեհարանի հարավային թևն է կազմում և կառուցվել է Ղազար Զահկեցի կաթողիկոսի ժամանակ, նույնպես արմատական վերակառուցման ենթարկվեց: Երկհարկանի, աղյուսաշեն (հում ու թրծված աղյուսներից) շենքի առաջին հարկը հատկացված է եղել տնտեսական նպատակների (վերաշինական աշխատանքների ժամանակ այստեղ հայտնաբերվեցին կարաս և տնտեսական այլ պարագաներ), իսկ երկրորդ հարկում եղել են բնակելի սենյակներ: Ճարտարապետ Ա. Գալիկյանի նախագծով վերջիններիս վերահատակագծման միջոցով ստեղծվեց սանիտարական հանգույցներով ապահովված 3 բնակարան: Առավել հարմարավետը՝ բաղկացած երկու մեծ սենյակներից, տեղավորված է հարավ-արևմտյան անկյունում: Սա իր սենյակների կույգ լուսամուտներով ու փակ պատշգամբով ուղղված է Հին վեհարանի բակի կողմը: Բնակարանների մուտքերը գտնվում են հարավային պատշգամբի կողմում:

Վանական սեղանատունը, որ արևելյան կողմից Ղազարապատ հյուրանոցի շարունակությունն է կազմում, եղավ արմատական վերակառուցման ենթարկված հաջորդ շենքը: Տեղադրված լինելով Մայր տաճարի բակի հարավակողմում (ուղղահայաց՝ Հին վեհարանին)՝ այն մաս է կազմում բակի հարավային պարագծի արևմտյան հատվածին:

Երկհարկանի (բակի կողմից միահարկ) այս շենքը մի շարք կաթողիկոսների շինարարական գործունեության արդյունք է: Առաջին հարկը, մասամբ քարաշեն, մասամբ աղյուսաշեն, կառուցվել է 1713 թ. Աղեքսանդր Զուղայեցի կաթողիկոսի օրոք որպես միաբանական սեղանատուն: Ղազարապատ հյուրանոցից այն անջատվում է դեպի հարավակողմյան ներքին բակը տանող թաղածածկ միջանցքով: 1750 թ. Ղազար Զահկեցի կաթողիկոսի օրոք սեղանատան վրա ավելացվել է երկրորդ հարկ (Մայր տաճարի բակն ուղղված քարաշեն պատով և աղյուսաշեն գմբեթներով ծածկված), որից հետո ողջ շենքը (ներառյալ նաև Հին վեհարանի հարավակողմյան բնակելի թևը) Ղազարապատ է կոչվել[41]:

Այլաձև շինարվեստով (հում և թրծված աղյուս, քար) ու կոնստրուկտիվ լուծումներով (առաջին հարկը թաղածածկ, երկրորդը՝ գլխբեթածածկ) կրկնակի հաստ (մինչև 2,6 մ.) պատերով բնորոշվող այս շենքն ուներ հարթ տանիք, որի վրա ավելի քան երկու հարյուրամյակի ընթացքում հետևհետե հավելված հողաշերտի հաստությունը հասնում էր 2,0 մետրի՝ հենարաններին հաղորդելով կգալի բեռ: Դրանով պետք է բացատրել առաջին հարկերի թաղածածկերի և երկրորդ հարկի գլխբեթածածկերի համակարգերում առաջացած վտանգավոր ճեղքերը, իսկ արտաքին (դեպի Մայր տաճարի բակն ուղղված) ճակատի երեսապատման՝ իր միջուկից անջատվելն ու թեքվելը դեպի դուրս: Շենքի այսպիսի վիճակը վթարային էր, նրան սպառնում էր փլուզում, եթե սնհապաղ միջոցներ ձեռք չառնվեին:

Այս ուղղությամբ հատուկ աշխատանքներ սկսվեցին կիրառվել 1965 թ. վերջերին, երբ Մայր Աթոռի ճարտարապետների հանձնաժողովի դեկտեմբերի 7-ին կայացած նիստում քննության առնվեց վանքի բակի հարավակողմյան շենքերի, այդ թվում նաև Ղազարապատի վերանորոգության հարցը: Նկատի ունենալով վերջինիս խիստ վթարային վիճակը՝ նպատակահարմար համարվեց տեղում ուսումնասիրություն կատարել՝ պարզելու համար շենքի տեխնիկական վիճակը և մշակելու կատարվելիք վերաշինական աշխատանքների սկզբունքները:

Բազմաշխատ և դժվարին եղավ Ղազարապատի վերաշինությունն ու ամրացումը. այն պահանջեց մասնագիտական ջանքերի առավելագույն լարում, հնարամտություն: Հյուսիսային պասը վերականգնելուց առաջ հարկ եղավ հիմնովին վերակառուցել նրա հիմքերը: Ապա վերաշարվելիք պատում, որպես հակաերկրաշարժային միջոցառում, միմյանցից որոշ հեռավորությամբ, հիմքից մինչև երկրորդ հարկի ծածկի տակ, երկաթբետոնե ուղղաձիգ, արտաքուստ չերևացող կանգնակներ տեղադրվեցին: Քանդված աղյուսաշեն թաղերն ու կամարները փոխարինվեցին նույնաձև երկաթբետոնե կոնստրուկցիաներով:

Նույն ձևով, մինչև հիմքերը ամրացվեց և

[41] Յովհաննէս Եպիսկ. Շահխաթունեանց, նույն տեղ, էջ 90—91:

վերաշինելեց հարավակողմյան միահարկ շարքի երկայնական պատը, որպեսզի այն կողմնակի դառնա հավելված երկրորդ հարկի համար: Ասա հարավային կողմից սենյակների մի շարք ավելացնելով, վերին հարկն ամբողջապես երկհարկանի դարձվեց: Այդ կապակցությամբ ներքին բակի կողմից, շենքի ողջ երկարությամբ, նոր պատ կառուցվեց ու վրան ծածկվեց երկաթբետոնով: Ինչպես առաջին հարկի սեղանատունը, խոհանոցը և օժանդակ սենյակները, այնպես էլ երկրորդ, ենթարանային հարկը, ապահովվեց ջրամատակարարման, կոյուղու, էլեկտրաֆիկացման ու ջեռուցման համակարգերով:

Վանական սեղանատուն

Վերաշինական հիմնական աշխատանքներն ավարտվելուց հետո կատարվեց սեղանատան երկու ճաշասրահների ներքին ձևավորումն ու կահավորումը: Հատակները սարքվեցին իտալական տաք երանգի մարմարով, որն իր գույնով ներդաշնակվեց կարմրավուն տուֆից կառուցված պատերի, կամարների ու թաղակապ ծածկի հետ: Քարե անշարժ հենարանների վրա ապիտակ մարմարի մեծաչափ սալերով ճաշասեղաններ սարքավորվեցին (միաբանական սեղանատանը՝ երկշարք, իսկ ճեմարանականներինը՝ միաշարք): Թաղերի գագաթներից կախվեցին երկարակոտ խաչաձև ջահեր: Երկու ճաշասրահների արևելյան պատերը հարդարվեցին Աղթամարի մոտիվներից փոխառնված բարձրաքանդակներով:

Այսպիսով ավարտվեցին Ղազարապատի մերաշինությունը, ներքին բարեկարգումը և կահավորումը:

Վանական սեղանատան պաշտոնական հանդիսավոր բացումը, բարձր նախագահությամբ Վեհափառ Հայրապետի, տեղի ունեցավ 1974 թ. սեպտեմբերի 28-ին:

Նոր մկրտարան

Մի նոր մկրտարանի ստեղծումը Մայր տաճարից դուրս, դարձավ անհետաձգելի հարց: Դատի նպատակահարմար համարվեց այն տեղավորել Ղազարապատ շենքի արևելյան կողմում (սեղանատնից ու խոհանոցից հետո), որը միահարկ բարձր թաղակապ սրահ էր՝ ծղեղնահարկով: Անցյալում այդ սրահը օգտագործվել է որպես հացատուն, որի պատճառով հարկ եղավ թաղակապ առաստաղը մաքրել ծխից, իսկ պատերը քանդվեցին ու վերաշինվեցին:

Նոր մկրտարանին ներսից մատուռի տեսք տրվեց՝ պատի տակին տեղադրելով քարաշեն քանդակազարդ սեղան, որի վերևում վերարտադրվեց Աղթամարի տաճարի Առաքելոց բարձրաքանդակը: Մկրտարանը սարքավորվեց արտաքուստ տուֆաշեն և քանդակազարդ մկրտության երկու սեղաններով, մեջտեղում մարմարակերտ ավազաններ՝ ասպահովված տաք և սառը ջրի մատակարարմամբ:

Վանքի նոր կաթսայատուն

Վանքի կաթսայատունը ստեղծվել էր Ղազարապատ շենքին ուղղահայաց տեղադրված միահարկ շենքում: Նրա կարողությունը և տպատարկման շառավիղը նախապես սահմանափակ էր (քանի որ Նոր վեհարանի նկուղում տարքավորված էր ինքնուրույն գործող կաթսայատուն): Շահագործման նպատակահարմարությունից ելնելով՝ հետագայում անհրաժեշտություն առաջացավ բոլոր շենքերն ապահովել ջեռուցմամբ (մի քանիսը նաև տաք ջրի մատակարարմամբ) կենտրոնական կաթսայատնից: Դրա համար անհրաժեշտ եղավ վերակառուցել գոյություն ունեցող կաթսայատունը:

Նույն տնտեսական բակի արևելյան հատվածում համախմբվեցին արտադրական և տնտեսական բնույթի որոշ միավորներ՝ տարբեր արհեստանոցներ, պահեստ, ավտոմեքենաների համար գարաժ, բենզինալցման կայանը: Առաջնագործական և մետաղագործական արհեստանոցները կազմակերպվեցին Ղազարապատի շենքին ուղղահայաց գոյություն ունեցող միահարկ շենքում:

Մայր տաճարի բակի հարավակողմյան պարագիծը լրացվեց վանքի հյուրանոցի՝ նոր վանատան կառուցմամբ[47]:

Վերանորոգման ենթարկվեցին նաև վանքապատկան մյուս շենքերը: «Երևանի խրցեր» կոչված շենքի (1893 թ.) բնակարանները երկրորդ հարկում վերահատակագծման ենթարկվելով՝ վերանորոգվեցին և այնտեղ ստեղծվեցին կենցաղային հարմարություններ: Նույն շենքի առաջին հարկը վերակառուցվեց որպես գրասենյակային հարկ: Երբ 1978 թ. գրասենյակները փոխադրվեցին «Սիլոդի» շենքը, առաջին հարկի սենյակները նույնպես վերակառուցվեցին ու դարձվեցին միաբանական բնակարաններ: «Հայրիկյան» բանգարանի շենքի (1896 թ.) հիմնական վերանորոգման հարցը առաջ քաշվեց, երբ ծրագրվում էր այն նորից օգտագործել որպես վանքի թանգարան: Մայրավանքի հարավային պարապատի գծով Մկրտիչ Խրիմյանի

[47] Այդ մասին տես նոր շենքերի շինարարությունը վերաբերող գլուխ:

(Հայրիկ) գահակալության օրոք կառուցված և նրա մականունը կրող այս միահարկ տուֆակերտ շենքը, թեև բարվոք վիճակում էր պահպանվել, սակայն կարիք ուներ որոշ բարեփոխությունների: Դրանք իրականացվեցին 1959 թ.: Հողածածկ կտուրը փոխարինվեց ծպեղավոր երկլանջ թիթեղապատ կտուրով: Առանց որևիցե փոփոխություն մտցնելու հատակագծման մեջ, ներսի պատերի վնասված ծեփը նորոգվեց ու ներկվեց: Չորս հավասարաչափ (յուրաքանչյուրը 113,0 ք. մ.) դահլիճներում ու նրանց միջև գտնվող նախասենյակում հատակները ծածկվեցին մոզայիկով: Պատրաստվեցին նոր դռներ ու լուսամուտներ: Արտաքին բալալտե աստիճաններն ու հարթակը նորոգվեցին: Տեղադրվեց դեպի կտուրը տանող մետաղյա սանդուղք:

Ողջ շենքն ապահովվեց կենտրոնական ջեռուցման ու էլեկտրական լուսավորության ցանցերով:

Այս է վանքապատկան շենքերի վերաշինության ընդհանուր նկարագիրը, վերաշինություն, որն իրականացվեց Վազգեն Ա Կաթողիկոսի գահակալության տարիներին՝ գործադրելով բալում ջանքեր ու ներդնելով նյութական կգալի միջոցներ:

(Շարունակելի)